

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

‘ \_\_\_\_\_ ’ 2009թ. N -Ա

ՀԱՐԿԱՅԻՆ, ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ  
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ,  
ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ.  
սեպտեմբերի 23-ի N 1112-Ն որոշումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել ‘Հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման նպատակով տեղեկանքի ներկայացման, հաստատման, տրամադրման և հաշվառման’ Կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԿԱՐԳ

ՀԱՐԿԱՅԻՆ, ՄԱՔՄԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ  
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ,  
ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին՝ N 1112-Ն որոշմամբ սահմանված տեղեկանքի ներկայացման, հաստատման, տրամադրման և հաշվառման ժամանակ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները:

2. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև 2006 թվականի փետրվարի 7-ին կնքված Շրջանակային համաձայնագրով նախատեսված գործողություն իրականացնող մարմինների կողմից ներկայացված տեղեկանքների տվյալների ճշտության/իսկության ստուգումը և եզրակացության ներկայացումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչությունը:

3. Գործողություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկանքները Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության իրավաբանական և ֆինանսաբյուջետային վարչությունների տրամադրած կարծիքների և Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչության եզրակացության հիման վրա հաստատում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավարը (այսուհետև՝ Աշխատակազմի ղեկավար):

## II. ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ

4. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից տեղեկանքներն ստացվելուց հետո երկու աշխատաքային օրվա ընթացքում նախարարության իրավաբանական և ֆինանսաբյուջետային վարչություններն Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչություն են ներկայացնում կարծիք հայտի հիմնավորվածության վերաբերյալ: Այնուհետև Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչության կողմից տեղեկանքների տվյալների ճշտության/իսկության ստուգումից հետո դրական եզրակացության դեպքում դրանք ներկայացվում են Աշխատակազմի ղեկավարի հաստատմանը և տրամադրվում գործողություն իրականացնող կազմակերպություններին:

## III. ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳ

5. Տեղեկանքը հանդիսանում է խիստ հաշվառման փաստաթուղթ, և նրա նկատմամբ կիրառվում են խիստ հաշվառման փաստաթղթերի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Տեղեկանքի ձևաթղթերը գործողություն իրականացնող կազմակերպությանը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ գործողություն իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված գրություն-պահանջագրի հիման վրա:

6. Տեղեկանքի ձևաթղթերը հաշվառվում են Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմակերպատնտեսական վարչության կողմից (Ձև 1):

7. Փչացած ձևաթղթերը վերացվում են տարեկան մեկ անգամ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմակերպատնտեսական վարչության կազմած արձանագրության համաձայն:

8. Ձևաթղթերի կորստի դեպքում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմակերպատնտեսական վարչության կողմից կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է կորած ձևաթղթերի քանակը (սերիաները և համարները): Եթե չօգտագործված ձևաթղթերի և այդ ձևաթղթերի առկա մնացորդների միջև ստուգման արդյունքներով տարբերություններ չեն հայտնաբերվում, ապա այդ ստուգումը արձանագրությամբ ձևակերպելու անհրաժեշտություն չի առաջանում, միայն գրանցվում է արվում անցկացրած ստուգման վերաբերյալ:

9. Տեղեկանքի ձևաթղթերի հաշվառման մատյանները պետք է լինեն համարակալված, ժապավենված և ստորագրված Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմակերպատնտեսական վարչության պետի

կողմից և կնքված լինեն Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կնիքով:

10. Գործողություն իրականացնող կազմակերպությունները կատարում են Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված տեղեկանքների հաշվառում:

11. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչության կողմից վարվում են փաստաթղթերի հաշվառման մատյաններ: Վարչությունը պատասխանատու է հաշվառման ճշտության և փաստաթղթերի պահպանման համար:

